

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի՝
2017 թ. հունիսի 22-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի
(հարցման կարգով)

ք. Երևան

22.06.2017 թ.

Հարցման կարգով նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 28-ը (կից ներկայացվում է արձանագրության ստորագրացուցակը):

Օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության հաստատում:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Աստվածաբանության ֆակուլտետում «Միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:

1.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության հաստատում: Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանի կողմից Խորհրդի 32 անդամներին առաքվել են ԵՊՀ 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության նախագիծը և քվեարկության թերթիկները: Վերջիններս լրացվել և վերադարձվել են Խորհրդի 28 անդամների կողմից: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ հաշվետվության համառոտ տարբերակը հրապարակել www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն հավելված 3-ի:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Աստվածաբանության ֆակուլտետում «Միջնակուսային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում: Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ծանուցվել է, որ ԵՊՀ գիտական խորհուրդը, առաջնորդվելով իր կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով, 26.01.2017 թ. որոշմամբ առաջարկում է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում ստեղծել «Միջնակուսային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը: Կենտրոնի ստեղծումը չի ենթադրում լրացուցիչ ֆինանսական միջոցների կենտրոնացում 2017 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվում: Քվեաթերթիկների միջոցով կատարված հարցման արդյունքները հետևյալն են. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Որոշվեց.

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 26.01.2017 թ. N 4/7.1 որոշմամբ կատարված առաջարկը, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Աստվածաբանության ֆակուլտետում ստեղծել «Միջնակուսային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան